

երկու արքաների՝ Ռուսա 1-ի (մ.թ.ա. 735-714 թթ.) և Արգիշթի II-ի (մ.թ.ա. 713-685թթ.) կամ թերևս նրանցից մեկն ու մեկի ժամանակակիցը և, ըստ այդմ էլ, հնարավոր է նաև անմիջական մասնակիցը ռազմա-քաղաքական այն իրողությունների մի մասի, որ ծավալվել են Սևանի ավազանում և հարակից շրջաններում նշված ժամանակահատվածում (Գայսերյան Վ. 1985, էջ 67-79: Меликишвили Г. 1960, էջ 328-329: Арутюнян Н. 1983, էջ 195-220):

ՎԵՐՋԱԲԱՆ

Դատելով սեպագիր սկզբնաղբյուրների հաղորդումներից, Սևանի ավազանը, որպես տնտեսական և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող շրջան և մարդկային ու նյութական (հումքային) նկատելի ռեսուրսներ պարունակող աշխարհագրական տարածք, մ.թ.ա. VIII դարից դարձել է Վանտոսպի թագավորության ռազմա-քաղաքական ձեռնարկումներում ամենից հաճախ ընդգրկվող շրջաններից մեկը: Ըստ որում, այդ միջոցառումները ոչ միայն ներառել են ռազմական արշավանքների ու բնակչության որոշ մասի տեղահանման ընդունված եղանակները, այլև զուգորդվել նշված տարածքում գտնվող հին բնակավայրերի վերակառուցման ու անվանափոխման («Խալդի աստծո քաղաք», «Թեյշերա աստծո քաղաք»), նոր ամրոցների ու պահակակետերի հիմնման, ինչպես նաև ռազմական համակազմի տեղաբաշխման միջոցառումներով: Նշված պատմա-քաղաքական համայնապատկերի ամենատարբեր մանրամասները ներկայացնում են ինչպես տեղի հնագիտական հուշարձաններից ի հայտ եկած բազմազան նյութերն, այնպես էլ Վանտոսպի թագավորության տիրակալների (Արգիշթի I, Սարդուրի II, Ռուսա I) կողմից Լճաշենում, Գավառում, Վարդաձորում, Ծովինարում և Ծովակում թողած, ապա և իրենց տարեգրությունների մեջ վերստին արձանագրած սեպագիր տեքստերը (УКН—127, I, 21-22: УКН—127, II, 25—26: УКН-128, A2, 1-13: УКН-155, A, 13-21: УКН-155, D, 45-53: УКН-155, F, 15-32: УКН-156, DI+DII, 1-30: УКН—160, УКН-161: УКН—265: УКН—266): Ըստ որում, վերջիններում հիշատակվում են ինչպես Սևանի ավազանի արևմտյան ու հարավային ափամերձ շրջաններում տեղաբաշխված բազմաթիվ բնակավայրերի, ցեղախմբերի ու քաղաքական կազմավորումների անվանումները (Կիեխունի-Քիխունի, Վելիքուխի-Վելիկունի, Իշտիկունի, Լիքի, Քամանի-Կամանի, Աղախունի, Տուլիխու-Թուլիխու, Լուերունի-Լուիարունի, Արքուքինի և այլն), անպես էլ նրանց համադաշնակցության հավաքական անունը՝ Ուդուրի-Էթիունի (Բարխուդարյան Ս. 1935, էջ 164: Ադունց Ն. 1972, էջ 206-207: Պետրոսյան Ս. 1976, էջ 191: Հմայակյան Ս. 1996, էջ 46-47: Պողոսյան Վ. 1996, էջ 32-46: Капанцян Г. 1941, էջ 62: Пиотровский Б. 1944, էջ 84: Меликишвили Г. 1954, էջ 56: Пиотровский Б. 1959, էջ 80: Меликишвили Г. 1960, էջ 444: Арутюнян Н. 1970, էջ 200: Арутюнян Н. 1985, էջ 198-199):

Ահա Սևանի ավազանում Վանտոսպի թագավորության տիրակալների այս բազմաբնույթ ձեռնարկումների մի կոնկրետ դրվագի վերհանմանն էլ նպաստում են Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված հնագիտական նյութերն ու դրանց հիման վրա արված մշակութային, հնամարդաբանական, առասպելաբանական և լեզվական մեկնաբանումներն ու վերակազմությունները:

Խնդրո առարկա տարածքի հետազոտումն ու Սևանի ավազանում թողած սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Գեղիովտի քարայր-դամբարանի տեղի ընտրությունը պատահական չէ: Այս տարածքի կարևո-

րության ու նրա մշտապես վերահսկման անհրաժեշտության մասին է խոսում նաև վան-տոսպցիների կողմից Գեղիովտում, քննարկվող քարայր-դամբարանի հարևանությամբ, ռազմական տեսանկյունից անչափ հարմար տեղադրություն ունեցող բլրի վրա կառուցված ամրոց-հենակետը, որը հայկական միջնադարյան ձեռագրերում (մասնավորապես Մտ. Ասողիկի մոտ) հիշատակվում է «Ալրերդ» անվամբ (ՀՀՇՏԲ, հ. 1, 1986, էջ 71):

Արված դիտարկումները, ինքնաբերաբար, առաջադրում են մեկ հարցի քննարկում ևս. Սևանի ավազանում տեղաբաշխված Ուդուրի-Էթիունի համադաշնության մեջ մտնող ցեղային կամ վաղպետական կազմավորումներից որի՞ տարածքում են կառուցվել Ալրերդ ամրոցն ու Գեղիովտի քարայր-դամբարանը:

Այս առումով առավել կարևոր տեղեկատվություն է ամփոփում Սարգսի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) Սևանի ավազանում թողած և, ըստ նրա սեպագիր տարեգրության տվյալների, մ.թ.ա. 753-752 թվականների իրադարձությունները ներկայացնող արձանագրությունը: Սկզբնաղբյուր, որի նախնական տեղադրության կոնկրետ վայրի մասին տեղեկությունները որոշ հակասական տվյալներ են պարունակում:

Այսպես. արքեպիսկոպոս Մեսրոպ Մմբատյանցը հայտնում է, որ արձանագրությունը հայտնաբերել է 1863 թվականին Նոր Բայազետից 20 վերստ հեռավորության վրա գտնվող Աղամխան գյուղի մոտակայքում, այնտեղ գտնվող ժայռից ինչ-ինչ պատճառով պոկված և գետնին ընկած մի քարաբեկորի վրա: Այս փաստը հաստատում է նաև պատմաբան Բ. Պատկանյանը, ավելացնելով, որ 1866 թվականին արձանագրությունը տեղափոխվել է Թիֆլիս՝ թանգարան (Патканов К. 1883, էջ 11, նկ. II): Մ. Նիկոլսկու տվյալների համաձայն, արձանագրությունը փորագրված է եղել Աղամխան գյուղի մոտ գտնվող ժայռի վրա, որտեղից պոկվել է Գուստավ Ռադդեի կողմից և տեղափոխվել Թիֆլիս (ЗОЛКА, т. 1, 1875: Раdde Г. 1891, էջ 21: Пиотровский Б. 1959, էջ 12): Ըստ որում, Մ. Նիկոլսկին պախարակում է այդ արարքը և հայտնում, որ արձանագիր հուշարձանները տեղեկատվական առումով առավել արժեքավոր են, երբ պահպանվում են իրենց նախնական տեղում (Никольский М. 1896, էջ 111-116): Մ. Նիկոլսկին ավելացնում է, որ այդ արարքից շատ տարիներ անց քննարկվող տարածքն է այցելել նաև Անդրկովկասն ուսումնասիրող արևելագետ Ա. Իվանովսկին, և Աղամխանի տարեց բնակիչները նրան ցույց են տվել այն ժայռերը, որոնցից մեկի վրայից իբրև թե հանվել է վերոհիշյալ արձանագրությունը (Никольский М. 1896, էջ 115):

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին վերաբերող տեղեկատվությունների մեջ հակասական է այն, որ դրանցից վաղերում նշվում է քննարկվող արձանագրության բեկորային վիճակն ու գետնին ընկած լինելու պարագան, իսկ համեմատաբար ուշերում՝ ժայռի վրա փորագրված լինելն ու Գ. Ռադդեի կողմից իր նախնական տեղից հատվելը: Եթե 1863 թվականին արձանագրությունն արդեն բեկորային վիճակում էր, ինչպես կարող էր 1866 թվականին վերստին հայտնվել ժայռի վրա և հատվել Գ. Ռադդեի կողմից...

Վերոհիշյալ տեղեկատվություններում ընդհանուր է Աղամխան-Ատամխան (ներկայիս՝ Վարդաձոր) գյուղի մոտ սեպագիր արձանագրության հայտնաբերման փաստն ու հետագա փոխադրումը Թիֆլիս: Ահա այն էլ հիմք ընդունելով, Սարգսի II-ի խնդրո առարկա արձանագրությանն աղամխանյան տեղորոշում են վերագրել հետագա ուսումնասիրողների հիմնական մասը (Սիբայելյան Գ. 1968, էջ 31, հանույթ 55: Ադոնց Ն. 1972, էջ 179, 207: Հ. Կարազետեան 1998, էջ 227-228: Церетели Г.В. 1939, № 21: Пиотровский Б. 1944, էջ 28, 82: Пиотровский Б. 1959, էջ 12: Мещанинов И. 1978, էջ 372-374: Арутюнян Н. 1985, էջ 131-132, 187-188: Diakonoff I., Kashkai S. 1981, էջ 85-86 և այլուք):

Թերված փաստերի համատեքստում անհասկանալի են և անծանոթ այն դրդապատ-
ճառները, որոնց հիման վրա, արևելագետ-սեպագրագետ Գ.Ա. Մելիքիշվիլին խնդրո
առարկա արձանագրությունը տեղադրել է Ադամխան (ներկայիս՝ Վարդաձոր) գյուղից
մոտ 15 կմ հարավ, Սևանա լճի հարավ-արևմտյան ափին գտնվող Ադիաման (ներկայիս՝
Ներքին Գետաշեն) գյուղի մերձակայքում (YKH-160): Իրարից ոչ այնքան հեռու
տեղավորված այս երկու բնակավայրերի հետ կապված պրոբլեմը, թերևս կարող էր
առաջանալ Ադիաման (Ատիաման) և Ադամխան (Ատամխան) տեղանվանումների որոշ
մանությունն ու դրանից բխող պատահական շփոթությունքի հետևանքով...

Սարդուրի II-ի վերոհիշյալ արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը:

^Dhal - di - ni - ni ba - ū - šī - ni
^Isar - du - ri - še ^Iar - giš - te - hi - ni - še
a - li ^{URU}tú - li - hu - ni URU · LUGÁL - nu - si
^Isi-na-li-bi-i ^ILu - e - [ri] - hi - ni - i
gu - nu - šá ha - u - bi ^ISi-na-li-bi-i
LUGÁL UKU^{MEŠ} - ra - ni ^{SAL}lu - tú - bi
ku-tu-be pa - ri ^{KUR}u - du - ri - e ti - ni

Իր գրելաձևով (սեպանշանների ընտրության սկզբունքով), ինչպես նաև քերա-
կանական կառուցվածքով (այս արձանագրությունը որոշակիորեն տարբերվում է
Վանտոսպի թագավորների և մասնավորապես Սարդուրի II-ի մյուս սեպագիր տեքս-
տերից և անվանաձևերի ու դարձվածքների մի քանի ուշագրավ (և անսովոր) դրսևորում-
ներ է պարունակում: Ուստի, մինչև տեքստի թարգմանությունը տալը, կարիք կա
անդրադառնալ վերջիններիս քննարկմանն ու մեկնաբանությանը:

1. Այժմ է զարմում այն հանգամանքը, որ վանտոսպյան արձանագրությունների մեջ
առաջին (և միակ) անգամ Սարդուրի անձնանվան առաջին վանկը տրված է ոչ թե
ընդունված ^{sar}₃ - 𐎶 (Իշթար դիցուհու անունը ներկայացնող) գաղափարագրով,
այլ ^{sar} - 𐎶𐎶 սեպանշանով, ինչի պատճառով էլ անվանումից առաջ օգտագործ-
վել է ոչ թե “ID” - 𐎶 (անձնանվան+դիցանվան), այլ “I” - 𐎶 (անձնանվան)
բացահայտիչը:

Այս ամենի հետևանքով Սարդուրի II-ի անվանումը քննարկվող արձանագրության
երկրորդ տողում վանտոսպյան սեպագրով ներկայացվել է ոչ թե տարածված ^{ID}sar₃-du-
ri, այլ անսովոր ^{sar} - du - ri վանկակապակցությամբ (Патканов К. 1983, արձանա-
գրություն II: YKH-160): Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ արքայի անձ-
նանունից, կարծես թե միտումնավոր կերպով զատվել են աստվածային խորհրդանիշն
ու իմաստը...

2. Տեսքտի չորրորդ տողում, նվաճված ցեղամիության անվանումը ներկայացնող
սեպանշաններից երրորդը վնասված է: Այս փաստն արձանագրված է ինչպես Բ.
Պատկանյանի կողմից արված զծանկարում (Патканов К. 1983, արձանագրություն II,
տող 4), այնպես էլ Մ. Նիկոլսկու հրատարակած լուսանկարում (Никольский М.
1896, աղ. XXVIII): Երկու արևելագետներն էլ վնասված վանկը կարդում են 𐎶𐎶 -ri ,
իսկ ողջ երկրանումը ^{KUR}Lue[ri]hi - «Լուե[րի]իսի երկիր» կամ «Լուե[րի] տոհմի երկիր»:
Գր. Մելիքիշվիլին, ըստ Սարդուրի II-ի տարեգրության համապատասխան հատվածի
(YKH - 156, DI + DII, 5 - 6) վնասված սեպանշանը վերականգնում է որպես 𐎶𐎶
«hu» և համապատասխանաբար արձանագրված երկրանունն ընթերցում ^{KUR}Lue[hu]hi-

«Լուե[խու] տոհմի երկիր»: Ըստ ամենայնի, Սարդուրի II-ի վերոհիշյալ տարեգրության մեջ, ու և *h*ս վանկերի սեպանշանների մնացորդն ապատճառով, փորագրող վարպետի կողմից թույլ է տրվել տեխնիկական սխալ՝ -*l* - ու վանկի փոխարեն, ուղղահայաց մեկ սեպի բաց թողնման ապատճառով արձանագրվել է -*l* -*h*ս: Ուստի մենք հավանական ենք համարում Զ. Պատկանյանի վերականգնումը, առավել ևս, որ քննարկվող երկրանունը, գրեթե նույն ձևով (^{KUR}Lueruhi - «Լուերուիսի երկիր» կամ «Լուերու տոհմի երկիր») հանդիպում է նաև Սարդուրի II-ի հաջորդ՝ Ռուսա 1-ի Ծովինարում (Սևանա լճի հարավային ափ) թողած արձանագրության մեջ (YKH - 2664):

3. Դարձյալ առաջին (և միակ) անգամ տեքստի 6-րդ տողում օգտագործված է ^{SAL}lu - *tū* - *bi* արտահայտությունը, որը կազմված է «^{SAL}lu-*tū* -» - «կին» արմատից և բայի առաջին դեմքի, եզակի թվի, անցյալ ժամանակի «-*bi*» վերջավորությունից: Նմանատիպ հոլովում ունեցող վանտոսայան մի խումբ բառերի (օրինակ՝ «*a-gu-bi*»՝ «անցկացրի, տարա», «*a-nia-ās-tu-bi*»՝ «այրեցի», «*ha-ú-bi*»՝ «նվաճեցի», «*ka-ru-bi*»՝ «հաղթեցի», «*ku-tu-be*»՝ «ուսլություն վերցրի, հասա», «*ši-di-iš-tu-bi*»՝ «կառուցեցի, շինեցի», «*te-ru-bi*»՝ «դրեցի, տվեցի, շնորհեցի», «*za-du-bi*»՝ «արեցի, կատարեցի», «*za-āš-gu-bi*»՝ «սպանեցի» և այլն) համադրությունը թույլ է տալիս «^{SAL}lu-*tū-bi*» արտահայտության համար հավանական համարել «կին դարձրի»՝ այսինքն «ամորձատեցի» իմաստը: Վանտոսայան սեպագիր տեքստերում հանդիպում է այս արտահայտության հոմանիշը՝ «*uediadubi*», որը կազմված է «*uediani*»՝ «կին» և «*dubi*»՝ «արեցի» բառարմատներից (YKH - 128, B1_{15,39}: YKH - 156C₁₄: YKH, էջ 410): Ի դեպ, նման վերծանության կողմնակիցն էր նաև Գ. Ծերեթելին (Церетели Г. 1939, տեքստ 21):

Արված մեկնաբանությունները մեզ հնարավորություն են ընձեռում մերժել Գր. Մելիքիշվիլու այն ենթադրությունը, թե իբր քննարկվող տեքստը փորագրող վարպետը «^{SAL}lu-*tū*» բառի և *bi* վանկի միջնամասում մոռացել է արձանագրել «*pa-ru*»՝ «քշել» երկվանկ բայը և, դրանով իսկ խաթարել «*pa-ru-bi*»՝ «քշեցի» արտահայտությունը (YKH - 160, ծանոթություն 1):

4. Տեքստի 7-րդ տողում արձանագրված «^{KUR}udurietini» երկրանունը Գր. Մելիքիշվիլին ընթերցում է «^{KUR}uduri eti[ն]i» ձևով, գտնելով, որ փորագրող վարպետի կողմից *ti* և ու վանկերի միջնամասում սխալմամբ բաց է թողնվել *ú* սեպանշանը և, որ տեքստում, փաստորեն, խոսվում է Սևանի ավազանի արևմտյան ու հարավային ափամերձ շրջանում տեղակայված ցեղամիությունների համադաշնության՝ Ուրուրի-Էթիունի երկրի մասին, առավել ևս, որ նույն արքայի սեպագիր տարեգրության մեջ (YKH - 155D₄₈) քննարկվող երկրանունը հանդիպում է հենց այնպես՝ «^{KUR}udurietiu» («Ուրուրիեթիունի երկիր»):

Քննարկվող արձանագրության (YKH - 160) համապատասխան հատվածի ընթերցման մի այլ տարբերակ է առաջարկել Գ. Ծերեթելին: Ըստ նրա «^{KUR}udurietini» անվանումը կարող է բաղկացած լինել «^{KUR}udurie»՝ «Երկիրն Ուրուրիի» և «*tini*»՝ «անուն» ինքնուրույն հատվածներից և բառացիորեն նշանակի «Երկիրն Ուրուրիի անվան»՝ այսինքն «Ուրուրիի անունը (կրող) երկիրը» (Мещанинов И. 1978, էջ 387):

Արված քննարկումներն ու մեկնաբանությունները թույլ են տալիս Վարդաձորի (Աղամխանի) արձանագրությունը թարգմանել հետևյալ կերպ.

Խալդյան հրամանով

Սարդուրի Արգիշթոքիին

ասում է. «Թուլիխուն՝ արքայական քաղաքը

Ծինալիբիի՝ Լուե[րի] ցեղի առաջնորդի,

կռվով գրավեցի: Ծինալիբի

թագավորին ժողովրդի առջև կին դարձրի («ամորձատեցի»):

Հասա մինչև Ուդուրի - Էթի(ու)նի երկիրը (կամ՝ Ուդուրի անվամբ երկիրը):

Արձանագրության մեջ հիշատակվող Ծինալիբի թագավորի Լուերիխի երկիրը, ինչպես նշեցինք վերևում, Սարդուրի 2-րդի սեպագիր տարեգրության մեջ հանդիպում է մ.թ.ա. 753-752 թթ. իրադարձությունների նկարագրության մեջ Լուեխու(ուխի) (УКН — 156 DI + DII₅ — 6), մ.թ.ա. 744 — 741 թթ. իրադարձությունների ժամանակ՝ Լուերունի (УКН — 155D₄₈) և մ.թ.ա. 741-739 թթ. դեպքերի առնչությամբ՝ Լուիպրունի (Լուիբրունի) (УКН — 155F₂₃) ձևերով: Արևելագետների միահամուռ կարծիքով Վարդաձորի արձանագրության մեջ և Սարդուրի II-ի տարեգրության տարբեր հատվածներում հանդիպող այս տեղանունները, միևնույն երկրի կամ ցեղամիության անվանական տարբերակներն են (Ադոնց Ն. 1972, էջ 207: Կարագեոգեան Յ. 1998, էջ 263-265: Церетели Г. 1939, № 21: Капанцян Г. 1941, էջ 11: Пиотровский Б. 1959, էջ 80: УКН, էջ 433: Арутюнян Н. 1970, էջ 264-265: Мещанинов И. 1978, էջ 384-387: Арутюнян Н. 1985, էջ 127, 131-132 և այլն): Նույն երկրանունը Լուերուխի ձևով հիշատակվում է նաև Ռուսա I-ի (մ.թ. ա. 735-714 թթ.) կողմից Սևանա լճի հարավային ափին գտնվող Ծովինար (նախկին՝ Քյուլադրան) գյուղի մոտ թողած արձանագրության մեջ (УКН — 266₄):

Սևանի ավազանում տեղաբաշխված ցեղախմբերի և նրանց համադաշնության՝ Ուդուրի-Էթիունիի վերաբերյալ Վանտոսայի թագավորների արձանագիր տվյալները թույլ են տվել արևելագետներին այդ համադաշնության մեջ մտնող Լուերունի (Լուերիխի-Լուիբրունի-Լուերուխի) ցեղամիությունը (երկիրը) տեղորոշել Սևանա լճի հարավ-արևմտյան անկյունում: Ըստ որում, նրանից արևելք՝ Սևանա լճի հարավային ափի երկայնքով տեղաբաշխված են եղել Քամանի, Արքութինի և դեպի Արցախ՝ Ուրտեխինի, իսկ հյուսիս՝ Ադախունի և Վելիքուխի երկրները: Դատելով այս տվյալներից Լուերու(խի/նի) երկիրը, ամենայն հավանականությամբ, զբաղեցրել է Արգիճի, Ծակքար և Վարդաձոր գետերի ավազաններն ու վերջիններիս միջնամասը ներառող տարածքը: Այս սահմաններում ներկայումս, հյուսիսից հարավ հաջորդականությամբ տեղաբաշխված են Վարդաձոր (Ադամխան), Ծակքար, Լիճք (Գյոլ), Ներքին Գետաշեն (Ներքին Ադիաման), Վերին Գետաշեն (Վերին Ադիաման), Գեղիովիտ (Վերին Դարանյուղ) և Քարաձի (Մադինա) բնակավայրերը: Ուստի «Ալբերդ» ամրոց-պահակակետն ու քննարկվող քարայր-դամբարանը, ամենայն հավանականությամբ, կառուցվել են իրենց հպատակեցված Լուերու(խի/նի) երկրի տարածքում:

Մեկ անգամ ևս նշենք, որ Գեղիովիտի քարայր-դամբարանի, ինչպես նաև «Ալբերդ» ամրոց-պահակակետի Լուերու(խի/նի) երկրի տարածքում կառուցելու հանգամանքը պատահական չէ, ինչը, մեր կարծիքով, հնագիտական և աշխարհագրական մի շարք փաստերին զուգահեռ, անուղղակի կերպով վկայում են նաև քննարկվող երկրի և նրա մայրաքաղաքի անվանումների, ինչպես նաև դրանց տիրակալի անձնանվան ստուգաբանությունները: Այս ուղղությամբ արդեն արված աշխատանքներն ավարտուն և ամբողջական չեն, որի պատճառով էլ նպատակահարմար ենք գտնում քիչ ավելի մանրամասն ներկայացնել քննարկվող խնդրին առնչվող մեր նկատառումները:

Սկսենք Լուերու(խի/նի) երկրի տիրակալ՝ Ծինալիբի(նի)ի անվան ստուգաբանությունից: Դեռևս ժամանակին Ն. Ադոնցն անդրադառնալով վանտոսայյան (ուրարտական) Ծինուիարդի (տարբերակ՝ Ծինույարդի) դիցանվան ստուգաբանությանը, վերջինս դիտարկել է որպես «ծինուի-» և «-արդի» (ըստ նրա՝ «արև») բաղադրիչներից կազմված բարդ բառ և թեականորեն առաջարկել համանման վերաբերմունք հանդես բերել նաև Ծինալիբի (Ծինա-լիբի) անձնանվանը (Ադոնց Ն. 1972, էջ 228): Գ.Ջահուկյանի կարծիքով ևս Ծինուիարդի դիցանունը կազմված է «Ծինուի» (հայերեն՝ «ծին, զարմ, սերմ,

սերունդ» իմաստով, վաղագույն տարբերակը՝ «ծինո») և «-արդի» (ըստ Գ. Ջահուկյանի հավանաբար «աստված») բաղադրիչներից (Ջահուկյան Գ. 1987, էջ 444):

Շարունակելով Ն.Ադունցի ենթադրությունը, մենք նպատակ ունենք հիմնավորել Ծինալիբի(նի) անվան «ծինա-» և «-լիբի(նի)» բաղադրիչներից կազմված լինելու վարկածը: Նախ նշենք, որ ինչպես Ծինուխարդի դիցանունը, այնպես էլ Ծինալիբի(նի) անձնանունը սոսկ վանտոսայան տեքստերում «ծինա-», «ծինուի-» բաղադրիչներով հանդիպող եզակի դրսևորումներ չեն: Որպես բառարմատային համանման բարդ գոյացություններ, թերևս, վերջիններիս խմբին են դասվում Իգանի երկրի տիրակալ Դիուծինիի (*Diasini*) անձնանունը, ինչպես նաև վանտոսայան արձանագրություններում հիշատակվող Տուարածինի երկրի (^{KUR}*Tuarasini*) և ասսուրական սեպագիր սկզբնաղբյուրներում հանդիպող Արմարիլի երկրի Ծինունակ և Ծինիշպալա քաղաքների անվանումները (УКН—155С₅₁: Арутюнян Н. 1985, էջ 16, 38, 40, 59, 196, 233, 235, 238, 239): Այս շարքն առավել ներկայացուցչական կլինի, եթե վերջիններիս ավելացնենք նաև Սանգիրուսու երկրի (Ուրմիա լճից հյուսիս) Շադիշծինա, Կիծուվատնա երկրի տարածքում՝ Խեթական պետության սահմանի մոտ տեղաբաշխված Ծինծիլուվա, ինչպես նաև բուն Խեթական տերության մաս կազմող Պարպածինա, Ծինիբնուվա և Ծինխուրու քաղաքների անվանումները (Хачатрян В. 1971, էջ 91: Ардзихба В. 1982, էջ 32-33, 75: Арутюнян Н. 1985, էջ 238):*

Վերը բերված բոլոր հատուկ անուններում իսկապես աչք են զարնում «ծին-», «ծինու-», «ծինա-» և «-ծինի-» բաղադրիչները, որոնք, ինչպես դիպուկ նկատել է պրոֆ. Գ. Ջահուկյանը, իմաստով իրոք կարող են առնչվել հնդեվրոպական «*g'en-*»՝ «ծին, զարմ, սերունդ» բառարմատին: Եթե առաջարկված ենթադրությունը ճիշտ է, ապա հետևում է, որ *Diasini* անձնանունը պետք է որ նշանակած լինի «դիվածին, աստվածածին, դյուցազն, դյուցընկեց» կամ «լուսածին, շողածին», քանի որ նրա «*diu-*» առաջին բաղադրիչի մեջ ևս նշմարելի է հնդեվրոպական «**dei-*» (1. «շողալ, օր, տի, լոյս», 2. «աստված, դի» իմաստներով) բառարմատի գոյությունը (Ջահուկյան Գ. 1987, էջ 84): Նույն տրամաբանությամբ ^{KUR}*Tuarasini* («Երկիր Տուարածինի») անվանումն իր «*tuara-*» (համապատասխանում է հնդեվրոպական «*tur-*» և հայերեն «տուար > տավար» բառարմատներին) բաղադրիչի շնորհիվ պետք է որ ստուգաբանվի «Տավար (տուր, ցուլ) ծնող երկիր», այսինքն, ըստ էության, համահունչ է Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի (բառացիորեն՝ «Տուր (տավար) բերող-ծնող երկրամաս») և Վասպուրական աշխարհի Առբերանի գավառի (բառացիորեն՝ «Առ-արու (նակ՝ ցուլ, տավար) բերող-ծնող տարածք») անվանումներին:*** Ըստ երևույթին մույն սկզբունքով են մեկնաբանվում նաև ասսուրական տեքստերում հանդիպող «Ծինունակ» (թերևս «ծին» և «ունակ, կարող» բառարմատներից) և «Ծինիշպալա («ծին» և «իշպալա»՝ գուցե «ասպ, ձի» բառարմատներից) տեղանունները:

* Այս համատեքստում ավելորդ չէ հիշատակել խեթական տարբեր ծիսակատարություններում հանդես եկող «ծինթուխի» կարգավիճակ ունեցող աղջիկների, ինչպես նաև արարողակարգերի ժամանակ կիրառվող «ծինար» («ծինիր») և «խամծինարա» առարկաների անվանումները (Ардзихба В. 1982, էջ 27, 71, 72, 75, 113, 129-132, 134, 202, 209):

** Այս առումով տե՛ս Գր.Ղափսնցյանի և Ս.Հարությունյանի հրապարակումները (Հարությունյան Ս. 2000, էջ 95: Капанцян Г. 1956, էջ 222-223):

*** «Ծին-» բաղադրիչով տեղանունները բազմաթիվ են նաև պատմական Հայաստանի գավառներում: Մասնավորապես, Ծնառիճ գյուղ (նակ՝ Ծնառճի վանք) գոյություն ուներ Բարձր Հայքի Դարանաղյաց գավառում, Ծնավոր գյուղ՝ Էրզրումի մահանգի Թորթումի գավառակում, Թորթում գետի ափին, Ծնավտկոս (Ծնտկույս) գյուղ՝ Այրարատ աշխարհի Գաբեղյան գավառում, Ծնի անվամբ գյուղ՝ Վանի մահանգի

Այս համատեքստում, մեր կարծիքով, հնարավոր է մեկնաբանել նաև Լուերու- (խի/նի) երկրի թագավոր Ծինալիբի(նի)ի անձնանունը: Ինչպես նշեցինք վերևում, մենք համամիտ ենք Ծինալիբի(նի) անձնանվան՝ Ն. Ադունցի կողմից արված, «Ծինա-» և «-լիբի(նի)» մասնատմանը: Ըստ որում, եթե «ծինա-» բաղադրիչը, այստեղ ևս, ըստ ամենայնի, կրում է «ծին, զարմ, սերունդ, ազգ» իմաստն, ապա «-լիբի(նի)» բաղադրիչի համար, մեր կարծիքով, առավել համադրելի են հայերենում հանդիպող «լիբս» կամ «լիփս» և «լիբանոտոս» կամ «լիւանոտոս» բառարմատները, որ բառացիորեն նշանակում են «հարավ-արևմտյան քամի»: Հր. Աճառյանի կարծիքով վերոհիշյալ բառերը կարող են փոխառնված լինել հունարեն «λιφ» և լատիներեն «libs»՝ «հարավ-արևմտյան քամի», ինչպես նաև եբրայերեն «lebānōn» «սպիտակ» (ավելի ուշ նաև՝ «խնկաբույր ծառ, կնդրուկ») բառարմատներից (Աճառյան Հ. 1973, էջ 280, 287): Թերևս ավելի հավանական է, որ «-լիբի(նի)» բաղադրիչն անմիջական կապ ունենա հնդեվրոպական «*alb^[1]o»՝ «սպիտակ, լուսավոր» արմատի հետ, այնպես ինչպես խեթերեն «alpa-» «ամպ», հունարեն «αλφοΰ»՝ «մաշկի վրա սպիտակ նշան, հետք», լատիներեն «albus»՝ «սպիտակ, ճերմակ», ումբերեն «alfu»՝ «սպիտակ, ճերմակ», ռուսերեն «олово»՝ «անագ (բառացիորեն՝ սպիտակ, փայլուն մետաղ)» և հնդեվրոպական այլ լեզուներում հանդիպող բառերը (Топоров В. 1975, էջ 81: Гамкрелидзе Т., Иванов В. 1984, էջ 783): Եթե բերված զուգահեռները համապատասխանում են իրականությանը, ապա Լուերու(խի/նի) երկրի տիրակալի անվան երկրորդ բաղադրիչը պետք է որ նշանակած լինի «սպիտակ, ճերմակ» կամ «քամի, հողմ»: Այսինքն՝ «Ծինալիբի(նի)» անձնանունը հնարավոր է «ճերմակածին, Լուսածին» կամ էլ «Հողմածին, Փոթորկածին, Քամուց ծնված» իմաստներն արտահայտած լինի:

Այս մեկնաբանությունն ուշադրության արժանի մեկ այլ եզրահանգման է բերում: Բանն այն է, որ Սերձավոր Արևելքի մի շարք պետություններում հնամենի սովորույթ կար, ըստ որի թագավորների, թագաժառանգների և արքայազների մի զգալի մասի անձնանունները կամ անմիջապես կրկնում էին հողմի և տարերքի աստծո անվանումը, կամ էլ իրենց մեջ ներառում էին այնպիսի բառարմատներ, որոնք ուղղակի նշանակում էին քամի, հողմ, փոթորիկ: Այս առումով մերձավորարևելյան Բել (Բալու, Բաալ, Վաալ) աստծո (հողմի-տարերքի աստված) անունը հանդիպում է Ասորեստանի (Բելու, Բելուրանի, Աշշուր-Բել-Նիշեշու, Աշշուր-Բել-կալա), Բաբելոնի թագավորության (Մարդուկ-Բել-գերի, Բել-իբնի) և Տյուրոսի թագավորության (Բաալ) արքայանուններում (Бикерман Э. 1976, էջ 184-188: Шифман И. 1987, էջ 157, 221): Հողմի և տարերքի աքաղական աստված Ադադի (Ադդու) անվանումը մեկ հազարամյակից ավել (մ.թ.ա. XIX-VIII դդ.) ժամանակահատվածում 13 անգամ կրկնվում է ասսուրական արքայացուցակներում. այդ թվում 5 անգամ՝ Շամշի-Ադադ, 2 անգամ՝ Շարմա-Ադադ, 3 անգամ՝ Ադադ-Ներարի, 2 անգամ՝ Էրիբա-Ադադ և 1 անգամ՝ Ադադ-Շալուլու համադրությամբ (Бикерман Э. 1976, էջ 187-188): Նույն աստծո անունը Նուր-Ադադ, Ծիլի-Ադադ, Ադադ-շում-իդդին, Ադադ-շում-ուծուր, Ադադ-ափլա-իդդին անձնանվանական տարբերակներով վկայված է նաև Բաբելոնի թագավորության մ.թ.ա. XIX-XI դարերի արքայացուցակներում (Бикерман Э. 1976, էջ 182-184): Ըստ որում, այս անվանումների հետ միասին, հատկապես Կասսիտական հարստության շրջանում (մ.թ.ա. 1742-1155 թթ.), Բաբելոնում հանդիպում են նաև հնդեվրոպական Բորեաս աստծո (դարձյալ Հողմի-տարերքի աստված) անվանումից ածանցված արքայանուններ

Շատախի գավառակում, Ծնիկ (Ծնկագեղ) անվամբ գյուղ Խարբերդի մահանգի Ակնի գավառակում և այլն (ՀՀՇՏԲ, 1988, էջ 858):

(Բուրնա-Բուրաշ կամ Բուրնա-Բուրարիաշ, Ուլամ-Բուրաշ կամ Ուլամ-Բուրարիաշ) (Бикерман Э. 1976, էջ 183): Հանգամանք, որ առանձին և խորն ուսումնասիրության խնդիր է: Ավելացնենք նաև, որ Կասսիտական հարստության վերջում և հատկապես Իսսինի II հարստությունից (մ.թ.ա. 1150-1027թթ.) սկսած ընդհուպ մինչև Նորբարելոնյան թագավորության վախճանը (մ.թ.ա. 626-539), այս տերության արքայանուններում մոտ երկու տասնյակ անգամ, տարբեր համադրումներով, սկսվում են գործածվել հողմի և փոթորկի հետ առնչվող մեկ այլ աստծո՝ Մարդուկի անվանումը (Մարդուկ-ափլա-իդդին, Մարդուկ-կաբիտ-ախխեշու, Իտտի-Մարդուկ-բալատի, Մարդուկ-նադին-ախխե, Մարդուկ-շապիք-գերի, Մարդուկ-ախխե-էրիբա, Մարդուկ-գաքիր-շումի, Մարդուկ-բալասսու-իքբի, Մարդուկ-ապլա-ուծուր, Էրիբա-Մարդուկ, Մուշեգիր-Մարդուկ, Ամել-Մարդուկ, Լաբաշի-Մարդուկ և այլն) (Бикерман Э. 1976, էջ 183-185):

Մերձավոր Արևելքի մ.թ.ա. II-I հազարամյակների մի շարք տերություններում լայն տարածում ունեին խեթա-խուտիական Թեշուր աստծո (դարձյալ Հողմի-Տարերքի աստված) անվանումից ածանցված արքայանունները: Մասնավորապես խեթական թագավոր Մուվաթալի (մ.թ.ա. XIV-XIII դարերի սահմանագիծ) որդին կրում էր Ուրխի-Թեշուր անունը (Генри О. 1987, էջ 27, 35, 44, 47, 60 և այլն):

Այս առումով տարբերակներն ավելի մեծաթիվ էին Արրապիսայի արքայանուններում (Շիլվա-Թեշուր, Կիպի-Թեշուր, Իթխի-Թեշուր, Խիշմի-Թեշուր, Մուշ-Թեշուր և այլն) (Вильхельм Г. 1992, էջ 84-85, 89):

Վերոհիշյալ խեթա-խուտիական դիցանունն իր տարբերակներն ուներ նաև Հայկական լեռնաշխարհի հարավում տեղաբաշխված Շուրբիայի արքայանուններում: Վերջինիս թագավորը կոչվում էր Նիք-Թեշուր, եղբայրը՝ Խու-Թեշուր (հին ընթերցումը՝ Բագ-Թեշուր), արքայազները՝ Շերփի-Թեշուր և Լիզի-Թեշուր (Саркисян А. 1989, էջ 28 — 29, 61 — 62): Զննարկվող խնդրի շրջանակներում, առաջին հայացքից այն տպավորությունն է ստացվում, որ Մերձավոր Արևելքի վերոհիշյալ տերություններից կարծես թե առանձնանում էր Վանտոսայի (Ուրարտու) թագավորությունը: Վերջինիս դիցարանում թեև կար խեթա-խուտիական Թեշուրին և՛ անվանապես, և՛ ֆունկցիայի առումով համարժեք Թեյշեբա աստված (ի պատիվ որի անվանակոչվում էին նույնիսկ քաղաքներ և ամրոցներ), սակայն վանտոսայան արքաների անձնանվանական համակարգում, վերջինս որպես անվանակերտ բաղադրիչ չէր կիրառվում: Թերևս պատճառն այն էր, որ «հողմ, քամի, փոթորիկ» հասկացությունները անուղղակի կերպով ամփոփվում և ներկայացվում էին վանտոսայան մեկ այլ արքայանվան մեջ: Խոսքը վերաբերում է «Արզիշթի» (տարբերակներ՝ «Արզիշտի, Արզիստի, Արզիսթի, Արզիշթե, Արզիշտե, Արզիսթե») անձնանվանը: Այն կրում էին Վանտոսայի թագավորության գահին բազմած երկու արքաներ՝ Արզիշթի I-ը (մ.թ.ա. 786-764 թթ.) և Արզիշթի II-ը (մ.թ.ա. 713-685 թթ.): Այս անձնանունը վանտոսայան սեպագիր տեքստերում հանդիպում է «Ar-gi-iš-ti», «Ar-giš-ti», «Ar-giš-te» տարբերակներով (УКН, էջ 418-419): Վաղուց արդեն արևելագետների մեջ շրջում է այն տեսակետը, որ «Արզիշթի» անվան հիմնամասը «'argi-» կամ «'argiš-» բաղադրիչը կարող է լինել: Սրան ամենից ավելի համապատասխանում են հնդեվրոպական «*arg-» կամ «*ar(e)g-»՝ «սպիտակ, փայլուն», կոկորդայինների հաշվառմամբ «*Hark'-»՝ «սպիտակ, փայլուն, արծաթ» և թերևս «(a)rg^[h]a-»՝ «արծեք, զին, հարգ» (հմտ. հայերեն «արկաթ>երկաթ», «արծաթ», «արծաթագին», «յարգեն», «յարգուն», «անարգ» բառերի հետ) բառարմատները (Աճառյան Հ. 1971, էջ 301-302: Ջահուկյան Գ. 1987, էջ 56-57: Պետրոսյան Ա. 1997, էջ 12-15: Гамкрелидзе Т., Иванов В. 1984, էջ 217, 229, 713, 919, 925): Այսինքն՝ Argisti անձնանունը, ըստ վերը

բերված գուգահեռների ստուգաբանվում է «սպիտակ, փայլուն» իմաստով: Այս համատեքստում ուշագրավ է ¹Argisti անվան մի այլ գուգահեռ ևս: Բանն այն է, որ «*arg-» հնդեվրոպական արմատից հայերենում ունենք մաս «արգեստես»՝ «հյուսիս-արևմտյան քամի» և «արգիտես»՝ «արագ անցնող կայծակ» բառերը: Ըստ Հ. Աճառյանի, դրանցից առաջինը կապված է հունարեն «αργεστος»՝ «արևելյան կամ հյուսիս-արևմտյան քամի», իսկ երկրորդը՝ «αργος»՝ «փայլող, փայլատակող» բառագոյացությունների հետ: Սրանք երկուսն էլ, մեծանուն լեզվաբանի կարծիքով ածանցված են «*arg-» հնդեվրոպական բառարմատից և, ըստ էության, խորհրդանշում են մի գործողություն կամ երևույթ, որի ընթացքում քամին ու հողմը կայծակների օգնությամբ քշում են ամպերն ու բացում լուսափայլ երկինքը (Աճառյան Հ. 1971, էջ 305): Միակ ավելացումն այն է, որ հայերենի և հունարենի վերոհիշյալ նույնիմաստ բառերը, հանձին վանտոսայան «¹argisti»-ի, թերևս ունեն դարձյալ հնդեվրոպական «*arg-» կամ «*ar(e)g-» արմատից սերող, իրենից առավել վաղ հոմանիշը:

Շարադրանքից հետևում է, որ «Արգիշթի» անձնանվան հիմքում ընկած «argi-» կամ «argis-» բաղադրիչը կարող էր ունենալ 1. «սպիտակ, փայլուն» և 2. «քամի, հողմ» իմաստները, որոնք միաժամանակ ներառվելով մեկ ամբողջության (տվյալ դեպքում հատուկ անվան) մեջ, ամենայն հավանականությամբ խորհրդանշել են վերջինիս կրողին՝ թագավորին անցնող, վանտոսացիների Հողմի-Տարերքի և Արևի աստվածների (Թեյշեբա+Շիվինի) գուգորդված ֆունկցիան: Նույնպիսի իմաստային ծանրաբեռնվածություն աստուրական արքայացուցակներում կրում է Շամշի-Ադադ (Արևի աստված+Հողմի-Տարերքի աստված) անձնանունը:

Ահա այս համատեքստում առավել քան խոսում է Լուերու(խի/նի) երկրի թագավոր Ծինալիբի(նի)ի անվան «Ծինա-»՝ «ծին, ծնունդ» և «-լիբի(նի)»՝ 1. «սպիտակ, փայլուն, լուսավոր», 2. «քամի, հողմ» բաղադրիչների ստուգաբանությունը: Ամբողջապես քրճնարկվող անձնանունը հավանաբար ընկալվել է «(Արևի) լույսից և հողմից ծնված» իմաստով, ինչը միանգամայն համարժեք է աստուրական «Շամշի-Ադադ» և վանտոսայան «Արգիշթի» արքայանուններին:

Եթե արված եզրահանգումները մոտ են իրականությանը, ապա թեականորեն կարելի է ենթադրել մաս, որ Ծինալիբի(նի) արքայանվան մեջ, «-լիբի(նի)» բաղադրիչի տեսքով առկա է ոչ միայն «հողմ, քամի, փոթորիկ» իմաստավորող բառարմատը, այլ թերևս հենց Լուերու(խի/նի) երկրի (և միգուցե ոչ միայն նրա) Հողմի-Տարերքի աստծո անունը՝ Լիբի (կամ Լիբինի)*: Գուցե հենց այս ենթադրվող դիցանվան արձագանքներն են կրում Հայկական լեռնաշխարհի մի շարք շրջաններում հանդիպող տեղանունները. այդ թվում Լիբի (Լիբ) անվամբ գյուղը Կարսի մարզի Օլթիի շրջանում, Լիբանոս գյուղը Էրզրումի նահանգի Բաբերդ գավառակում՝ Ճորոխ գետի վերին հոսանքում, Լիվանա (Լիվանե, Լիվանիա) քաղաքը Բաթումի մարզում, Լիվանա անվամբ դաշտը Ճորոխի ավազանում, Լիվանա գավառը Ախլախայի փաշայությունում, Լիվան գյուղը Բիթլիսի նահանգի Սղերդ գավառում և այլն (ՀՀՇՏԲ, 1988, էջ 584, 591):

Ոչ պակաս հետաքրքրական է մաս Լուերու(խի/նի) երկրի մայրաքաղաք Թուլիխուի (տարբերակ՝ Տուլիխու) անվանական ստուգաբանությունը: Մեր կարծիքով այս քաղաք-

*Այս առումով, համեմատության համար կարելի է բերել դարձյալ վանտոսայան արձանագրություններում հիշատակվող Պուլուադի երկրի (Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան հատվածում) ^{UR1}Li-ib/ip-li-u-a բնակավայրի անվանումը, որում հնարավոր է «Li-ib/ip-»-ը ներկայացնում է վերոհիշյալ Հողմի-Տարերքի աստծո անունը, «-li-»-ն՝ հոգնակիակերտ ածանց է, իսկ «-սու»-ն՝ երկրակերտ վերջածանց: Ուստի ^{URU}Lib/pli-ա բառացի կարող է նշանակել «Քաղաք (ուր) բնակվում են հողմերը», կամ ավելի ստույգ՝ «Հողմաշատ քաղաք»:

անունը համադրելի է հայերեն արմատական բառարանում առկա և, ըստ Հր. Աճառյանի հնդեվրոպական «stol-» արմատից ծագող «տող», «տիլ», «տղիղ», «տղխ»՝ «տուլ, տիլ, տիղմ, ցեխ» (Աճառյան Հր. 1979, էջ 414, 418), ինչպես նաև «դեղեխ»՝ «քամուց, ալեկոծությունից պղտորված, ապականված ջուր» (Աճառյան Հր. 1971, էջ 650-651) և «տաղախ»՝ «տիղմ, ցեխ» (Ջահուկյան Գ. 1987, էջ 591, 596) բառարմատներին: Եթե առաջադրված հիմնավորումները մոտ են իրականությանը, ապա պետք է ենթադրել, որ Լուերու(խի/նի) երկրի մայրաքաղաքն իր մեջ իմաստային մեկնաբանություն ունեցող անվանումը պետք է որ ստացած լինի Սևանա լճի առավելապես հատվածում՝ քամոտ, տղմոտ և ալեծուփ մի տեղ կառուցված լինելու պատճառով: Այն հանգամանքը, որ Թուլիխու-Տուլիխուն իմաստաբանորեն կարող էր կապված լինել ջրի, տիղմի ու ճահճուտի հետ անուղղակի կերպով կարծես թե վկայում են նաև հայերեն գրավոր սկզբնաղբյուրները: Վերջիններումս Թուլիխու-Տուլիխուի տեղանվանական գուգահեռները կամ գետեր են, կամ էլ բնակավայրեր, որ անմիջականորեն կառուցված են ծովեզրին կամ գետափին (այսինքն՝ երկու դեպքում էլ այս կամ այն չափով առնչվում են ջրի և տիղմի հետ): Այսպես. Թուլխ անվամբ գետ և վերջինիս մոտ գտնվող Թուլխ անվամբ գյուղ հայտնի էր Բիթլիսի նահանգի Բիթլիս գավառում՝ Վանա լճի հարավ-արևմտյան ափին (ՀՀՇՏԲ 1988, էջ 491): Դեկեք անվամբ գյուղ գտնվում էր Փոքր Հայքում, Գյումուշխանեի գավառում, Սև ծովը թավովող վտակներից մեկի ափին (ՀՀՇՏԲ 1988, էջ 73): Խարբերդի լճի շրջակայքում տեղորոշվող Տլուք գավառն ու նրանում գտնվող Ծով կամ Ծովք կաթողիկոսական բերդն է հիշատակում Մատթեոս Ուռհայեցին, ըստ որում, ուղղակիորեն կարծես հուշելով նաև ջրի ու ճահճուտների հետ վերջիններիս կապը (Մատթեոս Ուռհայեցի 1973, էջ 143, 189, 239, 249, 292, 346, ծանոթություն 56): Հավանաբար այս գավառի հետ ինչ-որ առնչություն ունի նաև հայկական պատմական սկզբնաղբյուրներում Կիլիկիայի և Սիրիայի սահմանագծին հիշատակվող Դուլիսե (տարբերակներ՝ Դելուկ, Դելուք, Դուլիքե, Տլուք) բնակավայրը (ՀՀՇՏԲ 1988, էջ 132): Թվարկված տեղանունների շարքը, թերևս, կարող են դասվել նաև Երևանի արվարձանում հիշատակվող Տուք տեղամասի և Սյունիքում գտնվող Տուրքս բնակավայրի անվանումները: Պատկերն առավել ամբողջական կլինի, եթե վերոհիշյալ տեղանուններին ավելացնենք նաև Դիարբեքիի նահանգի Արդանա-մադենի գավառում հանդիպող Թլսըճոր գյուղի և Դիարբեքիի քաղաքի մոտ գտնվող Թլխաս գյուղի, Չորրորդ Հայքում վկայված Թլխե (տարբերակներ՝ Թլխում, Թլխուտ՝ հավանաբար «ճահճուտ») բնակավայրի, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառով հոսող Թլխասջուր գետի և նրա ափին գտնվող Թլխաս գյուղի և Կիլիկիայում՝ Այնթապ-Մարաշ ճանապարհի վրա տեղաբաշխված Թլխում իջևանի անունները (ՀՀՇՏԲ 1988, էջ 455-456): Այն հանգամանքը, որ Թուլիխու-Տուլիխուի անվանական գուգահեռները միայն հայկական տեղանուններում հանդիպող պատահական գուգահայություններ չեն, այլ թերևս հնդեվրոպական հնագույն հիմք և որոշակի իմաստ ունեցող «stol-» բառարմատի կոնկրետ դրսևորումներ, կարելի է հիմնավորել Հոմերոսի, Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու փաստացի վկայություններով: Հոմերոսն իր «Իլիականում» հիշատակում է Իթակե կղզուց ոչ հեռու գտնվող Դուլիքիոն անունով (այսպես է կոչվել, հավանաբար, տղմոտ ափ ունենալու պատճառով) մի կղզի (Հոմերոս 1987, էջ 484), որի տեղադրությունն առ այսօր կոնկրետացված չէ: Ավելի ստույգ են Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին և Հովհաննես Դրասխանակերտցին: Մի Խորենացին, ներկայացնելով Պաս քաղաքից հետո Հայոց աշխարհում բյուզանդացիների կողմից գահ բարձրացված Վարազդատ Արշակունու ժամանակաշրջանը, նշում է, որ անհնազանդության պատճառով նույն բյուզանդացիների կողմից վեր-

ջինս արքայություն Ե Օվկիանոսում գտնվող Թուլիս* կղզին (Մովսես Խորենացի 1968, էջ 277-278): Նույն փաստերը կրկնում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին (Հովհաննես Դրասխանակերտցի 1996, էջ 54-55): Օվկիանոսում գտնվող Թուլիս կղզին կարծես թե Բրիտանական կղզիների մերձակայքում է տեղորոշում վաղ միջնադարի հայ մեծամուն աշխարհագրագետը (Անանիա Շիրակացի 1979, էջ 258, 266, 270): Այս համատեքստում հարկ է հիշատակել նաև Էգեյան ծովի Ռոդոս կղզուն և բնակիչներին Ստրաբոնի կողմից տրվող «Տելիսինիդա» և «Տելիսներ» անվանումները, որոնք, թերևս, նույնպես կարող էին ձևավորված լինել տեղանքի (տիղմ, ջուր, ալեկոծություն) առանձնահատկություններից (Страбои 1964, էջ 443, 449, 611, 612, 924): Չի բացառվում, որ նախապես նման բովանդակություն ամփոփված լինի նաև Տուլիսար (գտնվում է Տաջիկստանում, Չիլոչոռչաշմա գետակի ավազանում) կոչվող վայրի և հայտնի հնագիտական հուշարձանի անվան հիմքում (Мандельштам А. 1968, էջ 6): Թվարկված բոլոր տեղանուններն էլ, ըստ էության, գտնվում են հնդեվրոպական ցեղերի տարածման աշխարհագրական սահմաններում և, հնարավոր է, որ իսկապես վերջիններիս նախալեզվին պատկանող մեկ ընդհանուր բառարմատից սկզբնավորված լինեն:

Բերված տվյալներն ու մեկնաբանությունները մեզ թույլ են տալիս չհամաձայնվել արևելագետ Հ. Կարազյոզյանի այն կարծիքին, ըստ որի Թուլիսու տեղանունը կազմված է «թուլ-» (իմաստն անհայտ) և հյուսիսկովկասյան (դադստանյան) «-իխու»՝ «գետ» բաղադրիչներից: Վերջինս իբր վկայում է Հայկական լեռնաշխարհում (մասնավորապես Սևան և Վան լճերի ավազաններում) հյուսիսկովկասյան եկվոր ցեղային միավորումների առկայությունը: Բնակչություն, որն, արևելագետի կարծիքով, տեղի հոծ հնդեվրոպական զանգվածների մեջ հարատևելու հնարավորություն չի ունեցել (Կարազեոզեան Յ. 1998, էջ 227-228):

Այս ենթադրությունն առավել քան անընդունելի է, քանի որ Թուլիսուն անհնար է բաժանել «թուլ-» և «-իխու» բաղադրիչների հենց միայն այն պարզ պատճառով, որ կազմված է Խ-ի-ս երեք սեպանշաններից: Սրանցից յուրաքանչյուրը մեկ ամբողջություն կազմող ինքնուրույն վանկ է և կարող է խմբավորվել «Խ-ի-ս»՝ «Թուլ-իխու» կամ «Խի-ի-ս»՝ «Թուլի-խու», բայց ոչ երբեք «Խի-ի-ս»՝ «Թուլ-իխու» ձևով, քանի որ այդ դեպքում ստիպված կլինենք կամայականորեն կիսել մեկ ամբողջություն կազմող «li»- **Խ** վանկը, ինչը՝ նախ սեպագրության հանրահայտ օրենքների խախտում է, բացի այդ նույնիսկ նման մոտեցման դեպքում անգամ չի վերածվի «li» և «i» առանձին հնչյունների, այլ նայած երկատման ձևից, առաջ կբերի նոր վանկեր (օրինակ **Խ** -la, **ի** -še,

Խ -ma և այլն), որոնք ոչ մի կապ չունեն Թուլիսու քաղաքանվան, առավել ևս Թուլիսու արհեստական և կամայական արմատաբաժանման հետ:

Գեղեցիկ վանտոսսյան քարայր-դամբարանի և Ալբերդ ամրոց-պահակակետի Լուերու(խի/նի) երկրի տարածքում կառուցված լինելու հանգամանքը հիմնավորելու գործում, մեր կարծիքով, կարևոր դեր ունի նաև վերոհիշյալ երկրանվան ստուգաբանությունը: Այս առումով ուշադրության է արժանի Լուերու(խի/նի) երկրանվան «Լուերու-» (տարբերակ՝ «Լուերի-») հիմնամասի համադրությունը հայերենի արմատական բառարանում պահպանված և հազվադեպ կիրառվող «լարա» (հանդիպում է նաև «լոռայ», «լոռա» ձևերով)՝ «բնակավայր, վանք» իմաստով բառարմատին (Աճառյան Հ. 1973, էջ 269): Ավելորդ չէ հիշատակել նաև էտրուսկյան առասպելաբանության մեջ նախնյաց հոգիների տեր հանդիսացող Լարենտա (Լարունդա) աստծո և լարերի (դեպի անդրաշխարհ զնացող հոգիների պահապան և ուղեկից դիցեր), կելտական

* Կիրառված է հավանաբար հոգնակի թվի սեռականով, ուղղականը կլինի՝ Թուլիք, որն էլ, թերևս, ծագել է նախնական Թուլիխ ձևից:

աստվածային նահապետ Լիլի (Լեր, Լեյր) ու հռոմեական Լար աստվածության (ընտանեկան օջախի պահապան դից) անվանումները, որոնք հնարավոր է անվանականից զատ նաև իմաստային ծանրաբեռնվածության և գործելակերպի առումով մոտ են քննարկվող նյութին (Словарь мифов 1999, էջ 174, 179: Наговицын А. 2000, էջ 368-370, 382-388, 399-400, 486): Ըստ վաստակաշատ լեզվաբանի, այն ծագում է հին հունարեն «λαῦρα»՝ «փողոց, նեղ ճանապարհ» բառից, որը միջին հունարենում նաև «վանախցերի շարք» իմաստն է ձեռք բերել: Այս բառարմատին համադրելի են անգլոսաքսոնական «lar», հին գերմաներեն «gilari», իռլանդերեն «larach» (բոլոր լեզուներով էլ «բնակություն, բնակավայր» իմաստով) բառերը (Աճառյան Հ. 1973, էջ 269): Բացառված չէ, որ վանտոսայան (ուրարտական) սեպագրերում հանդիպող «lueru-» (տարբերակ՝ «lueri-») բառարմատը, հին հունարենում հանդիպող «λαῦρα»՝ «փողոց, նեղ ճանապարհ, արահետ, շառավիղ» բառի, Հայկական լեռնաշխարհում (մասնավորապես Սևանի ավազանում) կիրառված՝ հնդեվրոպական ծագում ունեցող առավել հին նույնիմաստ դրսևորումը լինի: Այս ենթադրության համար միգրացե ամուղղակի հիմնավորում կարող է ծառայել հայերենի արմատական բառարանում «աղուրայ», «աղուրայնոյ», «աղոր» տարբերակներով պահպանված և «շառավիղ, սերունդ» իմաստն արտահայտող բառը (Աճառյան Հ. 1971, էջ 135), որը թերևս հին «lueru-» արմատի յուրօրինակ դրսևորումն է հայերենում: Որպես հնդեվրոպական նախալեզվի բառարմատ, չի բացառվում, որ այն պահպանված լինի նաև գալերի երկրում (Ժամանակակից Ֆրանսիայի տարածքում) գտնվող Լուարա և բասկերի (ապրում են Ժամանակակից Իսպանիայի հյուսիսում) ավանդազրույցներում հանդիպող Լառաուն (Բասկյան ավանդազրույցներ, 1996, էջ 15) գետերի անվանումներում: Առավել ևս հավանական է, որ նույն արմատից ծագած լինի նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Ճորոխ գետի ավազանում, Շավշեք գետի Արդանուն վտակի մեջ թափվող Լոռի գետակի անունը (ՀՀՇՏԲ 1988, էջ 599):

Ուստի վանտոսայան արձանագրություններում հանդիպող ^{KUR} Lueru(hi/ni) երկրանունը տեղաբնիկների լեզվով բառացիորեն պետք է որ նշանակած լինի գետի (գետերի) երկայնքով՝ ինչ-որ կարևոր «ճանապարհի շրջանում տեղաբաշխված երկիր» կամ ինչ-որ կարևոր «ճանապարհի մերձակայքում բնակվող ցեղամիություն», իսկ ավելի կարճ՝ «ճանապարհի երկիր»:

Եթե Լուերու(խի/նի) երկրի և նրա Թուլիխու մայրաքաղաքի տեղանվանական, ինչպես նաև տիրակալ Ծինալիբի(նի)ի անձնանվանական ստուգաբանությունները հավաստի են, ապա վերջիններիս հիման վրա կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք Սևանի ավազանի հարավ-արևմտյան անկյունում տեղաբաշխված և, թերևս, հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ինչ-որ լեզվով խոսող ցեղամիության հետ: Ըստ որում, եթե վերջինիս տիրակալ Ծինալիբի(նի)ի անձնանվան մեկնությունը հնարավորություն է ընձեռում կցկտուր տեղեկություններ քաղել խնդրո առարկա երկրի կրոնի, տոնա-ծիսական պատկերացումների ու սովորույթների մասին, ապա տեղանվանական ստուգաբանություններն անմիջականորեն վկայում են աշխարհագրական միջավայրից դրանց սերված լինելը և տեղանունների ենթադրվող բովանդակության մեջ կողավորված ձևով ներկայացնում են այն կոնկրետ տարածքը, որն իր ռելիեֆի առանձնահատկությունների, բնակլիմայական պայմանների և առևտրա-տնտեսական համակարգում ունեցած կարևոր դերի շնորհիվ պատճառ է դարձել Լուերու(խի/նի) երկրանվան ու Թուլիխու քաղաքանվան ձևավորմանը:

Հատկապես վերջին մեկնաբանությունները հույժ կարևոր են և հատկանշական, քանի որ Լուերու(խի/նի) երկրի և նրա Թուլիխու մայրաքաղաքի անվանումներում, մեր կարծիքով, կողավորված տեղեկատվությունն այսօր էլ միանգամայն համապատաս-

խան է Սևանա լճի հարավ-արևմտյան անկյունում՝ Վարդաձոր, Ծակքար, Ներքին Գետաշեն, Մարտունի, Գեղիովիտ, Վերին Գետաշեն և Քարածի բնակավայրերի միջնամասն ընդգրկող տարածքի բնակչիմայական պայմաններին և ռելիեֆին:

Բանն այն է, որ Վարդաձոր, Ծակքար, Լիճք, Ներքին Գետաշեն և Մարտունի բնակավայրերի մոտ ընկած ավիամերձ ցածրադիր շրջանները ժամանակին մշտապես ողողվել են Սևանա լճի ջրերով: Ըստ որում, այսօր էլ վերոհիշյալ տարածքների մի մասում տեղումներով առատ տարիներին նկատվում են ցեխից և տիղմից կազմված ճահճանման գոյացություններ (մասնավորապես Լիճքից Մարտունի տանող ներկայիս մայրուղու մերձակայքում): Այս ամենին եթե ավելացնենք նաև Ներքին Գետաշեն գյուղի մոտով հոսող Արգիճի գետի վերին հոսանքում երկրաբանների ու աշխարհագրագետների կողմից ֆիքսված և այժմ էլ գոյություն ունեցող՝ Արգիճիի ճահճապատ գոգավորությունը (Գրիգորյան Տ., Հովհաննիսյան Դ. 1981, էջ 352), ապա, ըստ մեզ, պատկերն առավել քան ամբողջական և համադրելի կլինի Թուլիխու քաղաքանվանն ու նրա ստուգաբանությամբ:

Ոչ պակաս ուշագրավ է նաև Lueru(hi/ni) երկրանվան մեջ կողավորված և ինչ-որ ճանապարհ կամ ճանապարհներ մատնանշող տեղեկատվությունը: Բանն այն է, որ մոտավորապես Լուերու(խի/նի) երկրի հյուսիսային սահմանի մոտից (ներկայիս Վարդաձոր և Երանոս գյուղերի միջնամասով, ապա Վարդաձոր և Ծակքար գետերի հովիտներով) դեպի արևմուտք, ինչպես նաև մույն երկրի հարավային սահմանի երկայնքով (Ներքին Գետաշեն→Մարտունի→Գեղիովիտ→Սելիմի լեռնանցք→Սյունիք ուղղությամբ) դեպի հարավ ձգվում էին հնագույն ժամանակներից գործող այն ճանապարհները, որոնք Սևանի ավազանը կապում էին Հայկական լեռնաշխարհի հարակից շրջաններին: Վարդաձոր և Երանոս գյուղերի միջնամասով, ապա Վարդաձոր և Ծակքար գետերի հովիտներով դեպի արևմուտք ձգվող ճանապարհը, հավանորեն նշված գետերի վերին հոսանքում երկատվում էր և ուղիներից մեկը՝ շրջանցելով Աժդահակ լեռնագագաթը, Գեղամա լեռների այդ հատվածում գտնվող լեռնահովիտներից մեկով դուրս էր գալիս ներկայիս Կոտայքի մարզի տարածքը, ապա Հրազդան գետի ավազանը և շարունակվում դեպի արևմուտք (թերևս նաև հյուսիս), իսկ մյուսը՝ Գեղամա լեռներին զուգահեռ իջնում էր հարավ, շրջանցում դրանք և, մոտավորապես ներկայիս Խոսրովի արգելոցի շրջանում մուտք գործելով Արարատյան դաշտ, հավանաբար ուղղություն վերցնում դեպի հարավ կամ հարավ-արևմուտք: Զննարկվող ճանապարհի և նրա երկու ճյուղավորումների գոյությունը, թերևս կարելի է հիմնավորել վերջիններիս շրջանում հնագույն ժամանակներից գոյություն ունեցող պաշտամունքային երկու կարևոր համալիրներով, որոնցից առաջինն իր մեջ ներառում էր բուն Աժդահակ լեռն ու նրա լանջերին տեղակայված վիշապ-կոթողների համակարգը, իսկ երկրորդը՝ հնագույն ժամանակներից հայտնի և Մովսես Խորենացու մոտ հիշատակվող Մոսիների ծիսական ամտառն ու նրանից ոչ հեռու՝ գտնվող Դվին հնավայրի վաղերկաթեդարյան պաշտամունքային խոշորագույն կենտրոնը: Ավելացնենք նաև, որ Վարդաձոր և Երանոս գյուղերի միջնամասից սկիզբ առնող և դեպի Հրազդանի ավազանն ու Արարատյան դաշտը գնացող ճանապարհն, իր երկու ճյուղավորումներով հնարավորություն էր ընձեռում Սևանի ավազանի արևմտյան ափին գտնվող ցեղային և վաղաքական կազմավորումներին գործնական կապեր պահպանել վերոհիշյալ շրջանների առավել զարգացած կենտրոնների հետ և, որ ամենակարևորն է, ամենակարճ ճանապարհով հասնել Հրազդանի ավազանի (մասնավորապես Մարմարիկ գետի հովտում տեղավորված և շահագործվող) պղնձի և ոսկու հանքերին: Այս առումով, Լուերու(խի/նի) երկրից սկիզբ առնող և նշված ուղղությամբ ձգված ճանապարհի գոյության թերևս մի յուրօրինակ վկայություն կարող է հանդիսանալ Աղվերան բնակավայրի անվանումը, որի և Լուերու(խի/նի) երկ-

րանվան հնարավոր զուգահեռներն արդեն անց են կացվել հայ պատմագրության մեջ (Պետրոսյան Ս. 1976, էջ 190): Այստեղ ավելորդ չէ ավելացնել, որ դեպի արևմուտք և հյուսիս ճյուղավորված այս ենթադրյալ առևտրական ճանապարհի գոյության անուղղակի վկաները կարող են հանդիսանալ «lueru-» (տարբերակ՝ «lueri-») վերը քննարկված արմատից թերևս բխող Լոռի միևնույն անվամբ չորս գյուղերը Կարսի մարզի Արդահանի շրջանում, Էրզրումի նահանգի Բաբերդ գավառում, Տրապիզոնի մարզի Գյումուշխանեի գավառակում և Ճորոխ գետի ավազանում (ՀՀՏՏԲ 1988, էջ 599), ինչպես նաև Ալուարցա (հմմտ. Սյունիքի Աղուերծ, Ըղուերծ և Աղուերց տեղանվանական տարբերակներին) գյուղն Արածանի գետի մերձակայքում (ՀՀՏՏԲ 1986, էջ 103), ապա և հանրահայտ Լոռի (տարբերակներ՝ Լոռե, Լորե, Լորի) բերդամրոցը, քաղաքը, գավառը, գետը և նշանավոր հնագիտական հուշարձանը Հյուսիսային Հայաստանում (ՀՀՏՏԲ 1988, էջ 597-600):

Այսուհանդերձ, եթե Լուերու(խի/նի) երկրի հյուսիսով անցած այս ճանապարհի և նրա երկու ճյուղավորումների մասին եզրակացություններն առայժմ, մեծավ մասամբ, ենթադրելի են ու թեական, ապա նույն երկրի հարավային սահմանով՝ մոտավորապես ներկայիս Ներքին Գետաշեն գյուղից ոչ հեռու, Արգիճի գետի գետաբերանից սկիզբ առնող ու ժամանակակից Մարտունի և Գեղիովիտ բնակավայրերի միջով դեպի Սելիմի լեռնանցքը տանող ճանապարհը գործում է առ այսօր: Մա այն կարևոր և, ըստ էության, առավել հարմար, կարճ և համեմատաբար անվտանգ միակ ուղին էր, որը Սևանի ավազանից տանում էր դեպի Սյունիքի պղնձի հարուստ հանքավայրերը, այնուհետև հասնում Ուրմիա լճի ավազանում շահագործվող ոսկու կենտրոններին և վերջապես միանում քննարկվող ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի համար առաջնահերթ նշանակություն ունեցող, պարսիցծոցյան առևտրական ճանապարհին: Ահա թե ինչու, ռազմավարական առումով առանձնակի նշանակություն ունեցող այս ճանապարհի երկայնքով էր տեղաբաշխվել իրար հետ փոխկապակցված և, հավանաբար, քննարկվող ժամանակահատվածում Լուերու(խի/նի) երկրի կազմի մեջ մտնող ամրոցների (Կոթավանք, Սթնաձոր, Ջոջ կող, Գեղիովիտ 1, Գեղիովիտ 2, Ալբերդ, Վերին Գետաշեն, Քարածի և այլն) լավ հաշվարկված ու արդյունավետ պաշտպանական համակարգը: Հենց Լուերու(խի/նի) երկրից (բառացիորեն «ճանապարհի երկրից») սկիզբ առնող և դեպի հարավ գնացող այս ուղու տեղանվանական արձագանքները թերևս կարելի է նշմարել միջնադարյան Հայաստանի Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի Ըղուերծ (Ըղուերծ, Ըղվերծ, Ըղվերծ) և Հաբանդ գավառի Աղուերծ (Աղուերծ, Աղվերց, Աղվերծ) գյուղերի անվանումներում, ինչի վրա արդեն ուշադրություն է հրավիրել արևելագետ Հ. Կարազյոզյանը (Մտեփանոս Օրբելյան 1986, էջ 199, 236, 237, 394, 400, 466, 479: ՀՀՏՏԲ 1986, էջ 201: ՀՀՏՏԲ 1988, էջ 377: Կարագեղեան Յ. 1998, էջ 125-126):

Կարծում ենք, որ այս տեղանուններին կարելի է ավելացնել նաև Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի Լորու ձոր գավառամասի, Որոտան գետի աջակողմյան վտակ Լոր (տարբերակ՝ Լորաձոր) գետի, Միսիան քաղաքի մոտ գտնվող Լոր լեռնագագաթի, ինչպես նաև Լոր (տարբերակներ՝ Լար, Լորա գյուղ, Լորաձոր) գյուղի և Լորադարա ձորի (Արաքս գետի ավազանում, հավանաբար Արփա գետի վերին հոսանքում) անվանումները (ՀՀՏՏԲ 1988, էջ 601-602):

Ուստի միանգամայն հասկանալի է, որ ^{KUR}Lueru(hi/ni) «ճանապարհի երկիր»՝ որոշակի իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող, անվամբ երկրի հպատակեցումն անկասկած կարևոր նշանակություն պետք է ունենար ողջ Սևանի ավազանում (նաև հարակից շրջաններում) ռազմաքաղաքական գերիշխանություն հաստատելու համար:

Այստեղ արժե ընդգծել, որ ինչպես Սևանի ավազանի, այնպես և Սելիմի լեռնանցքի վերահսկումը Վանտոսայի թագավորության համար հատկապես կարևոր էր մ.թ.ա. 735

թվականի ծանր դեպքերից հետո: Բանն այն է, որ Ասորեստանի հետ մ.թ.ա. 743 և 735 թվականներին ունեցած անհաջող բախումներից հետո, Վանտոսայի թագավորությունն ամբողջապես կորցրել էր գերիշխանությունը դեպի արևմուտք և հարավ-արևմուտք տանող մերձավորարևելյան բանուկ առևտրական ճանապարհների նկատմամբ և, ըստ էության, գրկվել Աղձնիքի մետաղի հարուստ հանքերից օգտվելու և նույն տարածքով անցնող ոսկու տարանցիկ առևտրին հաղորդակից լինելու հնարավորությունից: Այս ամենի պատճառով Վանտոսայի թագավորության համար առաջնային սլլան պետք է մղվեր առևտրական կապերի ու մշակութային փոխառնչությունների, տվյալ պահին խոչընդոտներից զրեթե զերծ ճանապարհը, որն ապահովում էր գերիշխանություն Սևանի ավազանից հարավ-արևելք ընկած (Ուշկիանի լեռներ՝ «Ոսկու լեռներ», Սյունիք) և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում գտնվող (Համադանի շրջան) պղծնի և ոսկու հարուստ հանքավայրերի նկատմամբ և հնարավորության ընձեռում, շրջանցելով Ասորեստանը՝ Թալիշի, Գիլանի, Լուրիստանի և Խուզիստանի վրայով, դուրս գալ առևտրական գործառնությունների այնպիսի բանուկ մի շրջան, ինչպիսին Պարսից ծոցն էր: Թերևս սա էր հիմնական պատճառը, որ արևմուտքում Ասորեստանից պարտություն կրելուց հետո, Վանտոսայի տիրակալներն անընդհատ պայքարում էին Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան հատվածում գտնվող Մանա երկրի և վերջինիս հովանավորող Ասորեստանի դեմ, վերը նշված տարածքներում գերիշխանություն պահպանելու համար:

Սեկնաբանությունների այս համատեքստում միանգամայն հասկանալի են մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսի և մ.թ.ա. VII դարի առաջին կեսի Վանտոսայի արքաների ջանքերը Ներքին Գետաշեն-Մարտունի-Գեղիովիտ-Սելիմի լեռնանցք-Եղեգնաձոր-Սյունիք ճանապարհի վրա ամեն կերպ գերիշխանություն պահպանելու գործում, ինչը լավ փաստագրվում է Ներքին Գետաշենում, Գեղիովտում, Եղեգնաձորում, Մալիշկայում, Հարժիսում և Արևիսում (Միսիան քաղաքից 17կմ արևմուտք) հայտնաբերված վանտոսայան բազմաթիվ և բազմաբնույթ հնագիտական նյութերով (Գայսերյան Վ. 1985, էջ 67-79: Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ. 1991: Ենգիբարյան Ն. 1991, էջ 69: Խնկիկյան Օ. 1998, աղ. CIX-CXI: Арутюнян Н. 1985, էջ 195-229: Esayan S. 1984, էջ 136-138, աղ. 27, նկ. 86 և այլն):

Այս ճանապարհի վրա առաջնային դեր պիտի վերապահված լիներ հատկապես Գեղիովտին, քանի որ այն, ըստ էության, պահպանում և վերահսկում էր ռազմա-քաղաքական կարևոր հանգույցի՝ Աելիմի լեռնանցքի հյուսիսային մատույցները: Այդ են մատնանշում այս տարածքում գոյություն ունեցած ամրոցների վերակառուցումները վանտոսացիների կողմից և հատկապես Գեղիովտի տարածքում ռազմական ամրոց-հենակետի հիմնումը:*

Առայժմ դժվար է հաստատապես փաստել, եղե՞լ է արդյոք Գեղիովտի քարայր-դամբարանում ամփոփված բարձրաստիճան անձնավորությունը, քննարկվող հուշարձանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա կառուցված, Ալբերդի վանտոսայան ամրոց-պահակակետի տերը կամ ղեկավարը: Այդ մասին ավելի հիմնավոր ու հավաստի տեղեկություններ կարող են տալ քննարկվող ամրոցում 1994 թվականից սկսված և մինչև օրս շարունակվող հայ-իտալական հնագիտական արշավախմբի հետազաաշխատանքները (Հակոբյան Հ. 1996, էջ 39-40: Հակոբյան Հ., Վարդանյան Ս., Պարմե-

* Ավելացնենք նաև, որ ռազմավարական առումով եզակի այս ճանապարհին իր դերը չէր կորցրել նաև Անտիկ դարաշրջանում, ինչի մասին է վկայում հենց քննարկվող շրջանում (այսինքն՝ վանտոսայան տեքստերի Լուերու(սի/նի) երկրի տարածքում) Ծակքար գյուղի մոտ հայտնաբերված Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) արամեատառ սահմանաքարը:

ջիանի Ն. 1996, էջ 40-42): Սակայն այսօր արդեն, հենց նույն արշավախմբի ձեռք բերած տվյալներից պարզ է, որ ռազմավարական առումով բացառիկ դեր ունեցած այս ամբողջն ու նրա մերձակայքն իրենց նշանակությունը պահպանել են Վանտոսայի թագավորության անկումից հետո էլ և, դատելով քննարկվող տարածքում պեղումների ընթացքում հայտնաբերված ու որոշակի ժամանակագրական սահմաններ ցուցանող նյութերից, նշանակալի դեր խաղացել և՛ Երվանդունիների թագավորության տարիներին, և՛ աքեմենյան գերիշխանության ընթացքում, և՛ հելլենիստական ժամանակաշրջանում, և՛ Արտաշեսյանների հարստության օրոք:

ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՂՅՈՒՄԱԿ 1

Մերձավոր Արևելքի քարտեզը (մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կես):

ԱՂՅՈՒՄԱԿ 2

1. Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանի ընդհանուր տեսքը: 2. Հատակագիծը: 3. Ուղղահայաց կտրվածքը:

ԱՂՅՈՒՄԱԿ 3

Գեղիովտի քարայր-դամբարանի առաջին սրահի ընդհանուր պատկերը պեղումներից հետո:

ԱՂՅՈՒՄԱԿ 4

1. Վան: Խորխորյան մեծ քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 210, նկ. 58):

2. Վան: «Նավթ-քույու» քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 212, նկ. 60):

ԱՂՅՈՒՄԱԿ 5

1. Վան: Խարխարյան փոքր քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 211, նկ. 59):

2. Վանի ժայռի հյուսիսային քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 216, նկ. 64):

ԱՂՅՈՒՄԱԿ 6

1. Պալու: Քարայր I (Charlsworth M. 1980, էջ 91-97):

2. Պալու: Քարայր II (Koroğlu K. 1996, էջ 38-39, նկ. 6):

3. Պալու: Քարայր III (Sevin V. 1994, էջ 58-67):

ԱՂՅՈՒՄԱԿ 7

1. Վան: «Զինանոցին» կից քարայրի հատակագիծն ու կտրվածքները (Казнаков А. 1917, էջ 28-32, աղ. I և II):

2. Վանի ժայռի վերին հարթակի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 213, նկ. 61):